## ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ 1914-1916 թթ.

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ գաղթականությունը բազում դարերի պատմություն ունի: Լինելով հայոց պատմության ողբերգական և բեկումնային ժամանակաշրջանների արգասիքը, այն արտացոլել է բնակչության բռնի կամ կամավոր տեղաշարժը մի երկրից մյուսը, կամ հենց՝ երկրի ներսում:

Մայր երկրից պարբերաբար կատարվող զանգվածային արտագաղթերը և գաղթաշխարհի առաջացումը պայմանավորված էր Հայաստանի սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական հանգամանքներով: Դարեր շարունակ Հայաստանը ենթարկվել է տարբեր նվաճողների ասպատակությունների, զանգվածային կոտորածների, ավերածությունների, թալանվել է նրա ունեցվածքը, ամայացվել երկիրը, ինչը և առաջացրել է հայ բնակչության պարբերական արտահոսք, զանգվածային տեղահանություններ ու բռնագաղթեր:

Հայ ժողովրդի արտագաղթը մեծագույն չարիք էր երկրի համար: Պարբերաբար կրկնվող արտագաղթի հետևանքով հայաթափվում էին երկրի շատ գավառներ, որով երկիրը զրկվում էր պաշտպանունակությունից: Միևնույն ժամանակ խիստ փոփոխություն էր կրում Հայաստանի էթնիկական կազմը՝ հօգուտ եկվոր մահմեդականների:

Ռուս-թուրքական պատերազմները և արևմտահայ գաղթականությունը միշտ գտնվել են պատճառա-հետևանքային հարաբերությունների մեջ:

Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատում ռազմական գործողությունների և արևմտահայերի զանգվածային կոտորածների սկիզբը պատճառ հանդիսացան սահմանամերձ վայրերի հայության դրության վատթարացմանը, որի հետևանքով բազմաթիվ արևմտահայեր ու պարսկահայեր գաղթեցին և տեղափոխվեցին ռուսական տիրապետության շրջաններ:

Ինչպես հայտնի է՝ հարձակման անցնելով Կովկասյան ռազմաճակատում, ռուսական զորամիավորումները 1914թ. աշնանը գրավեցին Բասենի դաշտի մի մասը, Ալաշկերտը, Ղարաքիլիսան, Դութաղը, Թափարիզը, Սարայը, Բաշկալեն և Ուրմիայի շրջանը:[1] Սակայն Կ. Պոլսից Էրզրումի ճակատ տեղափոխված Էնվերը, ամբողջացնելով իր զորաբանակի ընտրանին, Արդահան-Օլթիի վրայով հարձակում սկսեց դեպի Կարս և Սարիղամիշ, իսկ 1914թ. դեկտեմբերի

16-ին հասնելով Սարիղամիշի մերձակայքը, ընդհանուր ահաբեկում սառաջացրեց ռուսական ամբողջ ճակատում:[2] Սկսվեց ռուսական զորքերի նահանջը, որի արդյունքում վերջիններս թողեցին Բասենի իրենց դիրքերը և Ալաշկերտի այն շրջանները, որոնք սահմանակից էին Կարսի ճակատին:

Թուրքական զորաբանակի առաջխաղացումը պատճառ հանդիսացավ Առաջին աշխարհամարտի տարիներին այդ տարածաշրջանից հայ գաղթականության սկզբնավորմանը: Առաջին գաղթականները թուրքական Բասենի շրջաններից ռուսական Բասեն տեղափոխվեցին 1914թ. նոյեմբերի 22-24-ը, Քյոփրի-Քյոյի նահանջից հետո:[3]

Գաղթի՝ համեմատաբար ավելի ուժեղ հոսանքը սկսվեց դեկտեմբերի 19-22-ը, Սարիղամիշի հայտնի դեպքերից հետո (դեկտեմբերի 18-19-ը), երբ ռուսական բանակի նահանջի հետևանքով տեղահան եղավ Սարիղամիշի, Կարսի, Դիադինի, Կաղզվանի, Արդահանի, Արդվինի, Օլթիի, Դութաղի, Բաշկալեի, Սարայի, Սողանլուի, Ալաշկերտի, Ղարաքիլիսայի, Բայազետի, Սալմաստի, Խոյի, Ուրմիայի, Դիլմանի և Թավրիզի հայությունը:[4] Խոսելով 1914թ. նոյեմբեր-դեկտեմբերյան գաղթի մասին, դեպքերի ականատես Ա-Դոն իր հիշողություններում գրում է. «Գաղթականները գալիս են թրջված, ցեխոտած, հոգնած քայլերով, գալիս են գունատ և հյուծված դեմքերով, գալիս են սայլերի, էշերի, եզների վրա կապոտած երեխաներով, իսկ մեծերը՝ մայրերը, ոտով, շալակած նվաղող փոքրիկներին և հաճախ մերկ ոտներով: Մեծերի դեմքերի վրա վիշտն է խոսում, իսկ փոքրերը լացում. հաց են ուզում»:[5]

Ճակատագրական այդ ծանր օրերին Բասենի և Ալաշկերտի գաղթականական մարմինները և կամավորական գնդերը մեծ աշխատանք կատարեցին գաղթող ժողովրդին պաշտպանելու և օժանդակելու ուղղությամբ: Ամենից պատասխանատու պահերին, երբ Բասենի ժողովրդին սպառնում էր բնաջնջման վտանգը, հայկական երրորդ կամավորական գունդը՝ Համազասպի ղեկավարությամբ, չենթարկվելով ետ նահանջելու ռուսական զինվորական հրամանին մնաց Բասենի Բաշ գյուղում՝ ժողովրդի պաշտպանության համար: Իսկ կամավորական երկրորդ գունդը՝ Դրոյի գլխավորությամբ, ձեռնարկեց Ալաշկերտի հայության պաշտպանությունը: Ինքնապաշտպանական այդ միջոցների շնորհիվ հնարավոր եղավ այդ շրջանի հայ գաղթականությանը փրկել անխուսափելի կոտորածից:

Գաղթականների շարանը Կաղզվան էր հասել, երբ փոխվեց դեպքերի ընթացքը: Պարտվելով Սարիղամիշի մոտ, Էնվերը փախավ Կ. Պոլիս, որից հետո ռուսական բանակը՝ շուրջ 15 օրվա ընթացքում, վերականգնեց իր նախկին դիրքերը:

1914թ. նոյեմբեր-դեկտեմբերյան իրադարձություններից անմիջապես հետո, 1915թ. հունվարի 30-ի վիճակագրության համաձայն, Բասենի, Նարիմանի, Բայազետի, Դիադինի, Ղարաքիլիսայի, Ալաշկերտի և Բաշկալեի գավառներից Անդրկովկասում ապաստանել էին 33078 (2124 տուն)[6], իսկ Կարսից, Կաղզվանից, Արդահանից, Օլթիից և Արդվինից՝ 9534 (1411 տուն) հայ գաղթական:[7]

Համանման իրավիճակ էր ստեղծվել նաև Պարսկաստանում: Ռազմական անբարենպաստ պայմանների հետևանքով Ատրպատականի զորամասի նահանջի ժամանակ, գործող բանակի հետ միասին, գաղթում է Պարսկաստանի քրիստոնյա ազգաբնակչության մի մասը՝ թվով 44000 հո-

գի, որից 24000-ը հայեր էին, հետևյալ վայրերից. Թավրիզից՝ 3000, Խոյից՝ 2000, Սալմաստից՝ 15000 և Ուրմիայից՝ 4000 հոգի: Սակայն ռուսական տիրապետության սահմանները անցան և Արևելյան Հայաստանում հանգրվանեցին միայն 7226 (1282 տուն) հայ գաղթական,[8] իսկ մնացած 20000-ը՝ ասորի և այլազգի քրիստոնյա գաղթականներ էին:[9]

Գաղթականական հոսանքը շարունակվեց նաև 1915թ. սկզբներին, երբ բազմաթիվ արևմտահայեր և պարսկահայեր ապաստանեցին Երևանի նահանգի տարբեր գավառներում:

Կովկասյան Գլխավոր Կոմիտեի տվյալներով 1914թ. վերջերին և 1915թ. սկզբներին Արևմտյան Հայաստանից, Պարսկաստանից և Թուրքիային սահմանակից շրջաններից Երևանի և Թիֆլիսի նահանգների 10 գավառներ գաղթեցին 67357 գաղթական, որից՝ 49838-ը հայեր էին:[10] Ըստ իրենց ունեցվածքի գաղթականները բաժանվում էին երկու խմբի՝ ճնշող մեծամասնություն կազմող ծայրահեղ չքավորների և ունևորների: Իրենց թշվառությամբ աչքի էին ընկնում հատկապես ալաշկերտցիները, քանի որ վերջիններիս փախուստն իրականացվել էր ամենահապճեպ ձևերով:

Այսուհանդերձ առաջին գաղթը՝ իր բոլոր սարսափներով հանդերձ, հասարակական մեծ աղետի կերպարանք չընդունեց: Ալաշկերտցիների շատ չնչին մասը միայն մնաց Իգդիրում: Ռուսական զինվորականության պաշտոնական տվյալների համաձայն գաղթածներից միայն 30000-ը մնացին Կովկասում:[11] Մնացածները կրկին վերադարձան իրենց բնակության նախկին վայրերը: Թուրքական Բասենի բնակչությունը հիմնականում տեղաբաշխվեց ռուսական Բասենի հայկական գյուղերում:

Դրա հետ միասին առաջին գաղթն իր բացասական ազդեցությունն ունեցավ ժողովրդի հոգեբանության վրա: Ինչպես նշում է Կ. Սասունին. «... առաջին նահանջը ընդհանուր սրտաբեկում առաջ բերեց»:[12] «Նահանջ բառը սարսափի ու գլխակորույս փախուստի իր իմաստով մնաց անջնջելի հայ ժողովրդի մտքից, ու այդ օրերից սկսած գաղթական բառը դարձավ տաճկահայերի թշվառ ու օգնության կարոտ մարդուն հոմանիշ»:[13]

1915թ. սկզբներին Կովկասյան ճակատի պատերազմական գործողություններն արդեն ընթանում էին Արևմտյան Հայաստանի տարածքում: Կովկասյան բանակի 4-րդ կորպուսի զորամասերի կանոնավոր ու կազմակերպված հարվածների ներքո թուրքական զորքերը խուճապահար նահանջեցին դեպի Մուշ և Բիթլիս: Հետապնդելով նահանջող թշնամուն ռուսական բանակը 1915թ. փետրվար-մայիս ամիսներին գրավեց Մանազկերտը, Բաշկալեն, Շատախը, Կոթուրը, Արճեշը և Վանը: Սակայն շուտով, ռազմական իրավիճակի կտրուկ փոփոխման հետևանքով, Կովկասյան զորաբանակն անհասկանալի պատճառներով նահանջեց դեպի Ալաշկերտի հովիտը, որի հետևանքով գաղթեցին հարակից շրջանների հայ բնակիչները: Հերթը հասավ Վան-Վասպուրականին: Հայ ազգաբնակչության գաղթի գույժը Վան հասավ 1915թ. հուլիսի 13-ին, և չնայած գեներալ Նիկոլաևը Վանի նահանգապետ Արամ Մանուկյանին հայտնել էր, որ «իրենց հրաման կա մնալ և թշնամու ճնշման տակ նահանջել»[14], սակայն այդ լուրը բնակչության մեջ խուճապ առաջացրեց:

Գաղթի կազմակերպման գործը ղեկավարելու համար, նահանգապետի կարգադրությամբ, ժողովրդի վստահությունը վայելող տեղացիներից ընտրվեց փոխադրության լիազոր հանձնաժողով:[15] Հուլիսի 18-ի երեկոյան հայտնի դարձավ Կովկասյան ճակատի ռուսական բանակի հրամանա-

տարի կարգադրությունն այն մասին, որ, եթե մինչև երեք օրվա ընթացքում գաղթականները Բերկրիի սահմանը չանցնեն, հնարավոր է, որ նահանջի գիծը փակվի և որի համար ինքը՝ գեներալը կհրաժարվի պատասխանատվությունից:[16] Վերոհիշյալ հրամանը գալիս էր ստիպելու Վան-Վասպուրականի հայրենասեր ժողովրդին բռնել արտագաղթի դաժան ճանապարհը:

Հուլիսի 18-ի գիշերը (շաբաթ օրը) սկսվեց Վասպուրականի ժողովրդի երկրորդ գաղթը: Շուտափույթ գաղթի տագնապալի լուրը չէր կարող անցանկալի խուճապ չառաջացնել ժողովրդի մեջ: Այդ պատճառով անկազմակերպ գաղթին որոշ կազմակերպված բնույթ հաղորդելու նպատակով ընտրվեցին զինվորական, առողջապահական, սննդի և այլ կարգի հանձնաժողովներ: Զինվորական՝ կարգադրիչ ու ղեկավար հանձնաժողովի պարտականությունները ստանձնեց Արմենակ Եկարյանը:[17]

Հուլիսի 19-ին իրենց աշխատանքը դադարեցրին նահանգային վարչության բոլոր մարմինները: Ժողովուրդը բռնեց գաղթի ճանապարհը: Վան, Ավանց, Սև-գետ, Գելու, Ջանիկ, Փանզ, Բերկրի, Բայազետ-աղա, Սոուղ-սու, Կեավրեշամե, Թափարիզի լեռնանցք, Կարաքենդ-Կզլդիզե, Կարաբուլախ, Չնգլի լեռնանցք, Օրգովի կիրճ, Իգդիր՝ ահա մոտ 200 վերստ երկարությամբ այն գիծը, որով շարժվում էին գաղթականները: Նահանջող բազմությանն ընկերակցում էին 3000 զինված վասպուրականցի երիտասարդներ:[18] Հարկ է առանձնակի նշել հատկապես գեներալ Տրուխինի կազակների մարդասիրությունը, որոնք օգնում էին տանջալից զգացումներով և մեծ փութկոտությամբ շարժվող գաղթականներին:[19]

Հուլիսի 24-ին թուրքական զորքերը շարժվեցին դեպի Բերկրի: Ոգևորվելով վերջինների առաջխաղացումից Զիլանի զինված քրդերը շրջապատեցին Բերկրիի ձորը և մի քանի անգամ հարձակումներ գործեցին շարժվող գաղթականության վրա: Ամենամեծ հարձակումը կազմակերպվեց հուլիսի 25-ին, երբ ռուսական զորամիավորումները և կամավորական գնդերը, դեռ շարունակվող գաղթականական հոսքի առկայությամբ, նահանջեցին Աբաղա: Գաղթականությունը, որի մի ծայրը դեռ Վանում էր, հետ փախավ դեպի Ջանիկ: Սոսկալի ջարդի հետևանքով զոհվեցին10000-ից ավելի գաղթական:[20] Բերկրիի գիծը փակվեց, որի հետևանքով գաղթականների մի մասը բռնեց Պարսկաստանի ճանապարհը: Ռուսական զորքերի նահանջը մեծ ոգևորություն առաջ բերեց քրդերի մոտ, որոնք Բերկրիի օրինակով հարձակում կազմակերպեցին նաև Սարայի շրջակայքում և պատճառ դարձան շուրջ 6000 գաղթականների կոտորածի:

Խոսելով 1915թ. հուլիսյան գաղթի մասին Պետական Դումայի անդամ Մ. Պապաջանյանը նշում էր, որ համաձայն առողջ բանականության պահանջի բնակչությանը նախօրոք պետք է տեղեկացվեր բանակի նահանջի մասին: Նշենք որ այդ նահանջի հետևանքով, հայ ժողովուրդը մինչև 40000 զոհ տվեց: Միևնույն ժամանակ Պապաջանյանը տեղեկացնում էր, որ իշխանությունները համապատասխան միջոցներ ձեռք չէին առել, որպեսզի գաղթականների տեղափոխումն իրականացվեր առանց զոհերի: Հայերին ցույց չէր տրվում օգնություն և պաշտպանություն, հանգամանք, որը հնարավորություն էր տալիս քրդական ցեղերին և չերքեզների ղեկավարներին շարունակել իրենց անպատիժ չարագործություններն Արևմտյան Հայաստանում:[21]

«Շնորհիվ իշխանությունների անհոգ վերաբերմունքի, - ինչպես նշվում է արխիվային փաստաթղթերից մեկում, - փախստականների դրու-

թյունը նահանջի ժամանակ չափազանց վատ էր: Այն ժամանակ, երբ Արևմտյան ռազմաճակատում տեղական ժողովուրդը ստիպողական կարգով էր տեղահան արվում դեպի Ռուսաստանի խորքերը, Կովկասյան ռազմաճակատում, ուր ամեն մի զինվորի էլ հայտնի էր, որ նահանջի դեպքում ազգաբնակչությունը, իր՝ դեպի Ռուսաստանը տածած համակրանքի պատճառով թուրքերի և քրդերի կողմից ենթարկվելու էր ընդհանուր սրախողխողման, ոչ միայն ստիպողական ճանապարհով տեղահան չարվեց, այլև բոլոր նախորդ նահանջների դեպքում էլ՝ ամենախիստ կերպով ծածուկ էր պահվում ազգաբնակչությունից, որի հետևանքով ամբողջովին սրախողխող եղավ նահանջի ճանապարհից դուրս գտնված Զեյդկանի, Մոլլա Մուլեյմանի, Խաստուրի և այլ գյուղերի ժողովուրդը: Նույնը կրկնվեց և Բասենում՝ հուլիսյան նահանջի ժամանակ: Նման հայատյաց քաղաքականությունն՝ այն ժողովրդի նկատմամբ, որը ապստամբության դրոշ էր պարզել թշնամու դեմ և ցնծագին դիմավորել ռուսական զորքերին»:[22]

Նույնիսկ "Республика" պարբերականն է խոստովանում, որ «նահանջն իրականացվում էր մեծ աճապարանքով, չհամապատասխանելով ռազմական գործողությունների իրավիճակին... Գործը հասնում էր այնտեղ, որ կանանց և երեխաների երկար շարանը մնում էր նահանջող բանակի թիկունքում՝ բոլոր կողմերից ոտքի կանգնած քրդերի հարվածների տակ: Մարդկային զանգվածները մահանում էին՝ լքված բախտի քմահաճույքին»:[23]

Վանի նահանգի գաղթը տևեց 34 օր, իսկ քաղաքինը՝ հուլիսի 18-24-ը: Այն ահավոր նյութական, բարոյական և մարդկային վնասներ պատճառեց վասպուրականցիներին և ընդհանրապես՝ արևմտահայությանը:

Հուլիսյան այդ դժնդակ օրերին գաղթեցին 271888 արևմտահայեր (ըստ Հանրի Բարբիի տվյալների 207473 հոգի)[24], որոնցից 15518-ը՝ Բասենից, 6050-ը՝ Աբաղայից և Աղբակից,180000-ը՝ Վանից, Բիթլիսից, Մուշից, Մանազկերտից, Պատնոսից, Այնթափից և Ալաշկերտից, 7320-ը՝ Օլթիից, Արդահանից և Արդանուշից, 63000-ը՝ Պարսկաստանից: Տարբեր հիվանդություններից, ցրտից և կյանքի անբարենպաստ պայմաններից ճանապարհին մահացան շուրջ 8000 հոգի: Կային ընտանիքներ, որոնք կորցրել էին իրենց կազմի 70-80 տոկոսը:[25] Գաղթեցին 3 ուղղություններով. Կարսից՝ Սարիղամիշի վրայով անցան թուրքական Բասենի, Կարինի, Բիթլիսի, Խնուսի՝ 18091, Իգդիրի վրայով՝ Բիթլիսի, Վանի, Մուշի, Մանազկերտի, Պատնոսի, Այնթափի, Աբաղայի, Ալաշկերտի շրջանների՝ 170000 և Ջուլֆայի գծով՝ Աղբակի ու Պարսկաստանի մյուս շրջանների՝ 18055 գաղթական: Վասպուրականի նահանջի հեռավոր շրջանների շուրջ 2000 բնակիչների չհաջողվեց փախչել և նրանք ստիպված եղան թաքնվել Շատախի, Մոկսի և Խիզանի անմատչելի լեռներում, ձորերում և անտառներում:[26] Գաղթականների 55 տոկոսը իգական սեռի ներկայացուցիչներ էին, 30 տոկոսը՝ երեխաներ էին: 10 տոկոսը՝ արական սեռի ներկայացուցիչներ, իսկ 5 տոկոսը՝ ծերեր:[27]

Վիճակագրական տվյալների համաձայն, Վանի հայերին պատկանող շուրջ 600 այրված տների և խանութների նյութական վնասը կազմում էր 30 մլն. ռուբլի, իսկ ամբողջ նահանգինը՝ 60-70 մլն. ռուբլի: Ընդ որում, միայն անասունների կորուստը կազմում էր 30 մլն. ռ., իսկ գյուղատնտեսական ունեցվածքինը՝ 12 մլն. ռուբլի:[28]

Նահանջը ոչ միայն նյութական հսկայական կորուստներ պատճառեց, այլև հոգեբանական ու բարոյական ծանր հարված հասցրեց անպաշտպան ժողովրդին: Այն ճակատագրական դժբախտություն էր հայ ժողովրդի համար:

Վան-Վասպուրականի բնակչության և, ընդհանրապես, արևմտահայության *երրորդ գաղթի* վերաբերյալ լուրեր սկսեցին տարածվել 1916թ. հուլիսի 22-ից, այն բանից հետո, երբ հայտնի դարձավ թուրքերի կողմից Ուշնիի գրավման և Բաղեշի շրջակայքում թշնամու խոշոր ուժերի կենտրոնացման մասին: Հուլիսի 26-ին նահանջի վերաբերյալ տարակարծություններն ավելի սաստկացան, և ժողովուրդը սկսեց աստիճանաբար հեռանալ Վանից:

Գաղթը սկսվեց հուլիսի 27-ին, չորեքշաբթի օրը:[29] Հուլիսի 27-ից 30-ը ամբողջ քաղաքը դատարկվեց: Գաղթականների շարանը բռնել էր Ավագից մինչև Ջանիկ ընկած ամբողջ ճանապարհը:

1916թ. ամառային այդ գաղթի հետևանքով տեղահան եղան Վասպուրականի, Մուշի, Բիթլիսի և Արևմտյան Հայաստանի այլ շրջանների շուրջ 50000 և Պարսկաստանի տարբեր շրջաններից գաղթած մոտ 15000 գաղթական[30], որոնց մեջ մեծ թիվ էին կազմում կանայք և երեխաներ:[31] Սակայն գաղթն անցավ կազմակերպված պայմաններում, որը հետևանք էր 1915թ. հուլիսյան գաղթի արդյունքների մանրամասն վերլուծության:

Վասպուրականի 1916թ. հուլիս-օգոստոսյան դեպքերի ժամանակ, Համադանի շրջանում ռուսական բանակի կատարած նահանջի հետևանքով, երբ Համադանի և Քիրմանշահի կողմերում գրոհող թուրքական բանակն իր բարբարոսական բնազդներին զոհ դարձրեց շրջանի քրիստոնյա բնակչությանը, առաջ եկավ խուճապահար մի գաղթ, որն իր էությամբ նմանվեց 1915թ. Վասպուրականի հուլիսյան գաղթին: Ռազմական անբարենպաստ իրադարձությունների հետևանքով գաղթեցին Թեհրանի, Ղազվինի, Համադանի, Սուլթանաբադի, Ղարաղանի ինչպես մյուս քրիստոնյա ազգերը, այնպես էլ հայերը: Հյուսիսային Պարսկաստանի հայ համայնքը, որը մինչև այդ մտահոգված էր արևմտահայ գաղթականության հոգսերով, այժմ ինքն ընկավ գաղթականական հորձանուտի մեջ: Փախուստը սկսվեց 1916թ. օգոստոսի 4-ին, այն բանից հետո, երբ դաշնակից պետությունների հյուպատոսները սկսեցին աստիճանաբար հեռանալ Թեհրանից: Խուճապի մատնվելով, պարսկահայ գաղթականները շարժվեցին Ղազվին-Ռեշտ ճանապարհով: Ընդհանուր առմամբ Ռեշտ տեղափոխվեց Պարսկաստանի տարբեր շրջաններից գաղթած մոտ 15000 փախստական:[32]

Գաղթականների վկայությամբ՝ գաղթն իրականացվեց համեմատաբար լավ պայմաններում՝ ժողովուրդը թշնամու կողմից չենթարկվեց ջարդի, քանի որ կանանց և երեխաների մի մասը տեղափոխվել էր այն ժամանակ (սկսած հունիսի 23-ից), երբ թուրքերը դեռ քաղաք չէին մտել: Սակայն այս դեպքերում էլ քիչ չէր նյութական և ֆինանսական վնասը: Գաղթողների մեծ մասը, փոխադրության միջոցներ չունենալու պատճառով, հարկադրված էր եղել մի քանի շաբաթ տևող այդ ճանապարհն անցնել եզներով կամ ոտքով,մի բան, որ պատճառ էր դարձել բազմաթիվ հիվանդությունների տարածմանը:

Արևմտահայության *չորրորդ գաղթը* սկիզբ առավ 1916թ. նոյեմբերի 9-ին: Գաղթն իրականացվեց կազմակերպված ձևով, առանց մարդկային կորուստների, չնայած այն հանգամանքին, որ ժողովուրդը՝ հանկարծակի

գալով, իր ամբողջ սեփականությունը՝ անասուններից բացի, թողեց թշնամուն և նահանջեց: Այս նահանջի ժամանակ քչերը բռնեցին Իգդիրի ճանապարհը: Կովկասից վերադարձողների վկայությամբ Իգդիր հասածների թիվը չէր հասնում 100-ի, իսկ տեղահան եղավ ընդհանուր առմամբ 16 հազար արևմտահայ:[33]

1914-1917թթ. մի շարք գաղթերի հետևանքով Արևմտյան Հայաստանի և Պարսկաստանի հայ ազգաբնակչության թվաքանակը նոսրացավ: Կովկասյան ճակատի փախստականների դրությունը կարգավորող գլխավոր մարմնի դիվանատան տվյալների համաձայն, Կովկասյան երկրամասում, 1916թ. հունվարի 1-ի դրությամբ ապաստանել էին՝ 234400[34], 1916թ. հունվարի 14-ի դրությամբ՝ 267000[35], 1916թ. ամռանը՝ 286470[36], 1916թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 366992[37], 1916թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ՝ 373553[38] և 1917թ. սկզբներին՝ 283063[39] գաղթական:

Գաղթականները տեղաբաշխվեցին ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում:

Ցարիզմը, որ Արևմտյան Հայաստանի գրավված և հայազրկված տարածքների նկատմամբ փորձում էր վարել վերաբնակեցման գաղութային քաղաքականություն, մյուս կողմից ստիպված էր հաշվի նստել նաև Անդրկովկասում հանգրվանած գաղթականների հետ և բավարարում տալ նրանց բազմաբնույթ կարիքներին: Չէ որ գաղթականների անմխիթար գոյավիճակը՝ տնտեսական և առողջապահական տեսակետից, սպառնում էր Կովկասյան երկրամասին: Այդ պատճառով գաղթականների օգնության գործը սկսեց տնօրինել պետությունը: 1915թ. օգոստոսի 30-ին կառավարության կողմից հրապարակվեց «Գաղթականների վիճակի ապահովման միջոցառումների վերաբերյալ» մի օրինագիծ[40], որի հիման վրա Ռուսաստանի ներքին գործերի նախարարության ղեկավարության ներքո, անձամբ՝ ներքին գործերի նախարար Ն. Վ. Պլեվեի նախագահությամբ, ստեղծվեց գաղթականների գործով զբաղվող Հատուկ խորհուրդ:[41]

Կանոնադրության հրապարակումից հետո, 1915թ. նոյեմբերի 27-ին ներքին գործերի նախարար Ա. Խվոստովի կողմից հաստատվեց «Գաղթականների կարիքների համար կատարվող միջոցառումների ծախսումների վերաբերյալ հաշվետվության կանոնները», որով գաղթականների կարիքների ապահովման միջոցառումներին մասնակցող բոլոր կառավարական հիմնարկները, ազգային կազմակերպությունները և պաշտոնատար անձինք պարտավոր էին ներքին գործերի նախարարությանը հաշվետվություն ներկայացնել գաղթականների օգտին կատարվող իրենց ծախսումների վերաբերյալ:[42]

1916թ. մարտի 2-ին ներքին գործերի նախարարի կողմից հաստատվեց գաղթականների օգնության նոր ղեկավար կանոնադրություն, որի հիմքում, մասնավորապես, ընկած էին նախորդ կանոնադրության հիմնական սկզբունքները:[43] Կովկասյան երկրամասում գաղթականների կարիքները բավարարելու համար 1916թ. ապրիլի 20-ին ընդունվեց «Կովկասյան ճակատում գաղթականների տեղավորման ղեկավար դրույթները» օրինագիծը, որը, փաստորեն, վերոհիշյալ կանոնադրության տեղայնացումն էր:[44]

Գաղթականների օգնության գործի կազմակերպումը պետության տնօրինությունն անցնելուց հետո,1915թ. հոկտեմբերի 29-ին հրապարակվեց ներքին գործերի նախարարության կողմից հաստատված՝ «Կայսրու-

թյան ներսում գաղթականների տեղավորման գլխավոր լիազորների հրամանը»[45], որից հետո 1915թ. նոյեմբերի 5-ին, Կովկասի փոխարքա գեներալ-ադյուտանտ Նիկոլայ Նիկոլաևիչի կողմից հաստատվեց «Կովկասյան ճակատի գաղթականների տեղավորման գլխավոր լիազորի հրամանը»[46], որի հիմքում, փաստորեն, ընկած էին վերոհիշյալ համակայսերական հրամանի հիմնական դրույթները: Իսկ մինչ այդ՝ 1915թ. հոկտեմբերի 19-ին, Կովկասի փախարքային կից Կովկասյան ճակատի գաղթականների տեղավորման գլխավոր լիազոր էր նշանակվել գեներալ-մայոր Ալ. Թամամշյանը (Թամամշև):[47] Այնուհետև կազմվեց Կովկասյան ճակատի գաղթականների տեղավորման գլխավոր լիազորի գրասենյակ[48], իսկ 1916թ. հունիսի 19-ին Կովկասի փախարքայի քաղաքացիական մասի օգնական գեներալ-լեյտենանտ Իշխան Օռլովի կողմից հաստատվեց նաև գաղթականների հարցով զբաղվող լիազորների հրահանգը:[49]

Գաղթականների օգնության գլխավոր աղբյուրը պետական գանձարանն էր, Տատյանա Նիկոլայևնայի կոմիտեն, հայկական և արտասահմանյան հասարակական կազմակերպությունները: Նրանց օգնության հիմնական ձևերն էին՝ պարենային, բնակարանային, բժշկական, կրթական, իրավաբանական օգնությունը, որբերի խնամքը, նպաստների և դրամական փոխատվությունների բաժանումը և այլն:[50]

Այսուհանդերձ, կառավարությունը՝ հաշվի առնելով պետական գանձարանի ճգնաժամային վիճակը և գաղթականների օգտին կատարվող պետական ծախսումների սահմանափակման անհրաժեշտությունը, օգտագործում էր յուրաքանչյուր հարմար առիթ գաղթականների օգտին կատարվող ծախսումները կրճատելու համար: Այսպես՝ 1916թ. հունիսի 24-ի իր թիվ 13/4340 որոշմամբ կառավարությունը կրճատեց պարենային նպաստի չափը:[51] Հարցի միակ լուծումը, ինչպես նշում էր փոխարքայի քաղաքացիական մասի օգնական գեներալ-լեյտենանտ իշխան Օռլովը, գաղթականներին տարբեր ընույթի աշխատանքների մեջ ներգրավելն էր, քանի որ այդ էին պահանջում պետության շահերը: Կառավարությունը պետք է օգնություն ցույց տար միայն անաշխատունակներին:[52]

Պետական օժանդակությանը զուգընթաց, լիարժեք օգնություն կազմակերպելու նպատակով, պատերազմի տարիներին ստեղծվեցին բազմաթիվ գաղթականական կոմիտեներ, իսկ որոշ բարեգործական հիմնարկներ վերակազմեցին իրենց գործունեությունն այդ ուղղությամբ. գաղթականներին օգնելու գործում մեծ դեր խաղացին հատկապես Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը և Հայկական կենտրոնական կոմիտեն, Մոսկվայի և պատերազմից վնասվածներին օգնող Պետրոգրադի կոմիտեները, Հայ նպաստամատույց և «Մեղու» ընկերությունները, Հայ տիկնանց և Հայ ուսուցչական կոմիտեները, Հայրենակցական միությունների միությունը, Թիֆլիսի պարսկահայերի հանձնաժողովը, Երևանի, Էջմիածնի, Ջուղայի, Ալեքսանդրապոլի, Կարսի և այլ վայրերի Եղբայրական օգնության կոմիտեները, Բաքվի Մարդասիրական-կուլտուրական, Հայ գյուղատնտեսական ընկերությունները, Տատյանա Նիկոլայևնայի կոմիտեն, Քաղաքների միության կոմիտեն և այլն, որոնք անց էին կացնում գաղթականների հաշվառում, բացում էին սննդատու կայաններ, գաղթականների կենցաղային կարիքները բավարարելու համար օգնություն էին կազմակերպում ինչպես դրամով, այնպես էլ բնամթերքով, կատարում էին գաղթականների տեղաբաշխում երկրի տարբեր շրջաններում, կառավա-

րում էին հայ բնակիչներին պատկանող շարժական և անշարժ գույքը, իրականացնում էին գերության մեջ գտնվող գաղթականների փրկության գործը, բացում էին որբանոցներ և զբաղվում որբերի խնամքով ու դաստիարակությամբ: Այդ ամենը կատարվում էր ռուսական, եվրոպական և ամերիկյան գաղթականական կոմիտեների միջոցով: Չնայած փախստականներին օժանդակող ընկերությունների միջև չկար ընդհանուր կապ և ղեկավարություն, բայց, այնուամենայնիվ, բազմաթիվ հարցերում, այդ թվում՝ հողատարածությունների մշակման, անասունների և գյուղատնտեսական գործիքների մատակարարման հարցերում, առկա էր միասնական գործելակերպը:

Այսուհանդերձ՝ գաղթականներին բազմակողմանի և ամբողջական օժանդակություն ցույց տալու նպատակով անհրաժեշտ էր միավորել նրանց օգտին գործող բոլոր կազմակերպությունների և մարմինների ուժերը: Կազմակերպչական այդ աշխատանքը ստանձնեց Էջմիածնի նորաստեղծ Եղբայրական օգնության կոմիտեն: Նրա անմիջական ղեկավարությամբ 1915թ. մարտի 1-2-ը Էջմիածնում տեղի ունեցավ գաղթականության առաջին համագումարը:[53] Այդ համագումարը կարևոր նշանակություն ունեցավ հայ գաղթականության կյանքում: Դա առաջին համագումարն էր, որ քննության ենթարկեց գաղթականների օգնության, տեղավորման, նրանց պահպանման և հայրենիք վերադառնալու հարցերը: Համագումարում առաջին անգամ փորձ կատարվեց կենտրոնացնելու հայ գաղթականության հարցով զբաղվող բոլոր հասարակական և բարեգործական հաստատությունների ուժերը:[54]

Էջմիածնի համագումարից հետո Պետրոգրադի և Մոսկվայի հայկական կոմիտեները 1915թ. աշնանը Պետրոգրադում կայացած իրենց միացյալ նիստում որոշեցին Պետրոգրադում հրավիրել հայ փախստականներին նպաստող կազմակերպությունների ներկայացուցիչների նոր համագումար:[55] 1916թ. մայիսի 10-ին Պետրոգրադում մեծ հանդիսավորությամբ բացվեց հայ գաղթականության առաջին համառուսական համագումարը, որը զբաղվեց միմիայն փախստականներին օգնելու խնդիրներով: Ճիշտ է, համագումարում ընկերությունների միություն չստեղծվեց, սակայն այն օժանդակեց, որպեսզի գոյություն ունեցող յուրաքանչյուր կազմակերպություն համակարգի իր գործունեությունը:[56]

Առաջին աշխարհամարտի տարիներին զանգվածային տեղահանությունների և կոտորածների հետևանքով արևմտահայ գաղթականության ֆիզիկական ոչնչացման վտանգին զուգահեռ՝ վտանգված էին նաև հայ ժողովրդի այդ հատվածի հոգևոր, մշակութային և կրոնական արժեքները: Այդ է պատճառը, որ այդ տարիներին Էջմիածնի կաթողիկոսարանը ձեռնամուխ եղավ մի շարք կազմակերպչական միջոցառումների իրականացմանը, փրկելու համար արևմտահայերի բազմադարյան և հարուստ մշակույթի գանձերը:[57]

1916 թվականին օրակարգի հարց դարձավ այն խնդիրը, որ չպետք է սահմանափակվել միայն Կովկասում ապաստանած գաղթականների հոգսերը հոգալով, այլ պետք է մտածել նաև կրկին հայրենիք վերադարձող փախստականների հայրական օրրանի վերաշինման մասին: Ընդհանրապես՝ 1916 թվականն այն նշանակությունն ունեցավ գաղթականության համար, որ քիչ թե շատ կանոնավորվեց արևմտահայ գաղթականության վիճակը, աստիճանաբար կասեցվեց տարափոխիկ հիվանդությունների տա-

ռածումը, վերացավ նախկին խուճապը, և գաղթականական գործի կազմակերպումը սկսեց տարվել ավելի մտածված կերպով: Հիմնվեցին կոոպերատիվներ, կանոնավորվեց պետական նպաստի բաշխումը, որի չափը 1916թ. հասնում էր 20 մլն.: Գաղթականությունն աստիճանաբար ընտելացավ տեղական տնտեսական պայմաններին և կարողացավ իր ընդունակությունները ցուցաբերել ոչ միայն գյուղատնտեսության, այլև առևտրի և արհեստների մեջ:

1916թ. առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց արևմտահայ մտավորականությանը, վաճառականությանը և արհեստավորությանը: Այդ նպատակով հատկացվեց 300000ռ.: Արևմտահայ մտավորականությունն ի վիճակի եղավ Երևանում, Թիֆլիսում վերսկսել Վանում իր աշխատանքները դադարեցրած «Աշխատանք» պարբերականի և նոր՝ «Վան-Տոսպ» շաբաթաթերթի հրատարակությունները:

Ընդհանրացնենք՝

• Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքական կառավարության կողմից իրականացված հայերի ցեղասպանության և ռուսական բանակի մի շարք նահանջների հետևանքով 1914-1916թթ. միայն Կովկաս գաղթեցին շուրջ 370 հազար գաղթական:

• Գաղթականության առաջացումը պատճառեց ոչ միայն նյութական հսկայական կորուստներ, այլև հոգեբանական և բարոյական ծանր հարված հասցրեց արևմտահայությանը:

• Հարյուրամյակների ընթացքում տարբեր կողմերից բզկտված Պատմական Հայաստանը հայազրկվեց: Հայ ժողովուրդը զրկվեց իր պատմական հայրենիքից:

• Չնայած բազմահազար գաղթականներ փրկվեցին կոտորածներից, սակայն հայրենիքի կորուստը և գաղթաշխարհի առաջացումը հետագայում պատճառ դարձավ տարածաշրջանային «միկրոզենոֆոնդի» մահացմանը:

• Այդուհանդերձ գաղթաշխարհը, ինչպես նախորդ պատերազմների ժամանակ, Առաջին աշխարհամարտի տարիներին ևս նպաստեց Արևելյան Հայաստանում հայ տարրի ստվարացմանը և հայ ժողովրդի հավաքական գոյությանը:

• Գաղթականներն իրենց մասնակցությունը բերեցին Արևելյան Հայաստանի ավերված տնտեսության վերականգնման գործին և, թեկուզ իրենց քանակական առումով, նպաստեցին Հայաստանի առաջին Հանրապետության կայացմանը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Ա-Դռ. Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Երևան, 1917, էջ 107:

[2] Կ. Մասունի. Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), Տաճկահայ գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, Բոստոն, 1927, էջ 44:

[3] ՀՀ Պատմության Պետական Կենտրոնական Արխիվ (այսուհետև - ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 29, ՀՀ Պատմության պետական թանգարան, Նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան, թիվ 839, արկղ 3, գ. 176, թ. 3-24, նաև

Գաղթականական ալբոմ, Թիֆլիս,1917, էջ 1:

[4] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 29, ՀՀ Պատմության պետական բանգարան, Նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան, թիվ 839, արկղ 3, գ. 176, թ. 3-24, 4-1, նաև Գաղթականական ալբոմ, էջ 1-2:

[5] Պատմության պետական բանգարան, նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան, թիվ 839/196, գ. 319, թ. 167:

[6] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 50, ց. 1, գ. 28, թ. 25, «Արարատ», 1915թ. հունվար, թիվ Ա, «Արև», 1915թ. մարտի 5, թիվ 50, "Кавказское Слово", 1915г., 22 апреля N 90, նաև Ա-Դո. նշվ. աշխ., էջ 11 3-114, նաև Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, հ. Ա., Կ. Պոլիս, 1920, էջ 61:

[7] Эриванская статистическая комиссия, Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр) 1914-1915гг., Перепись произведена 30-го января 1915г., Эривань, 1915, с. 68.

[8] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 50, ց. 1, գ. 127, թ. 109, նաև ՀՀ Հասարակական Քաղաքական Կազմակերպությունների վաստաթղթերի Պետական Կենտրոնական Արխիվ (այսուհետև ՀՀ ՀՔԿՊՊԿԱ), ֆ. 1022, ց. 2, գ. 1255, թ. 8, նաև «Այգ», 1917թ., փետրվարի 5, թիվ 5, նաև Ա-Դո, նշվ. աշխ., էջ 114:

[9] Эриванская статистическая комиссия..., с. 68.

[10] Там же, с. 38-41, «Փայլակ», 1915թ. մայիսի 31, թիվ 24:

[11] Архив Внешней Политики Российской Империи РФ (այսուհետև՝ АВПРИ РФ, ф. Политархив, 1914-1917гг., оп. 482, д. 3484, л. 150.)

[12] Կ. Սասունի. նշվ. աշխ., էջ 47:

[13] Նույն տեղում, էջ 46:

[14] ՀՔԿՊՊԿԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 6:

[15] Նույն տեղում, թ. 8, նաև «Վան-Տոսպ», 1915թ., դեկտեմբերի 20, թիվ 4:

[16] Նույն տեղում, էջ 9, նաև «Ազգ», 1915թ., հոկտեմբերի 8, թիվ 14:

[17] «Վան-Տոսպ», 1916թ., հունվարի 3, թիվ 6:

[18] Լ. Չորմիսյան. Համապատկեր արևմտահայ մեկ դարու պատմության, Գ. հատոր (1908-1922), Պեյրութ, 1975, էջ 264, նաև Կ. Սասունի. նշվ. աշխ., էջ 82:

[19] Центральный Государственный Военно-Исторический Архив РФ (այսուհետև՝ ЦГВИА РФ, ф. 2100, оп. 1, д. 646,л. 82.)

[20] Ա-Դո. նշվ. աշխ., էջ 280:

[21] АВПРИ, ф. 151, Политархив, 1916г., оп. 482, д. 3487, л. 11, նաև "Армяне и война", Одесса, 1916г., апрель-май, N 2-3.

[22] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 35-36:

[23] "Республика", 1917г., 26 июля, N 23.

[24] Հանրի Քարբի. Սարսափի երկրին մեջ: Նահատակ Հայաստան, Կ. Պոլիս, 1919, էջ 110:

[25] Центральный Государственный Исторический Архив Р. Груз. (այսուհետև՝ ЦГИА РГруз.), ф. 520, оп. 1, д. 40, л. 54, նաև д. 204,л. 4, նաև գ. 204 , թ. 5, նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 21, նաև С. Асланянц. Среди беженцев (личные впечатления), Астрахань, 1915, с. 18.

[26] ЦГИА РГруз., ф. 520, оп. 1, д. 40, л. 54.

[27] «Համբավարեր», 1916թ., հունվարի 3, թիվ 2, նաև Հանրի Քարբի, նշվ. աշխ., էջ 110, նաև Կ. Սասունի. նշվ., աշխ., էջ 324:

[28] ЦГИА РГруз., ф. 520, оп. 1, д. 40, л. 54, նաև «Համբավարեր», 1916թ., հունվարի 3, թիվ 2:

[29] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 412, ց. 1, գ. 278, 1-2 (անգլերեն լեզվով), նաև "Армянский вестник", 1916, թիվ 32:

[30] «Համբավարեր», 1916թ., օգոստոսի 3, թիվ 33:

[31] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 332, ց, 1, գ. 1069, թ. 1-2:

[32] «Համբավաբեր», օգոստոսի 28, թիվ 35:
[33] «Հորիզոն»,1916թ., դեկտեմբերի 7, թիվ 273:
[34] «Մշակ», 1916թ., հունվարի 16, թիվ 9, նաև «Համբավաբեր», 1916թ. հունվարի 10, թիվ 3, նաև "Армянский вестник", 1916, N 1, նաև "Армяне и война", 1916, март, նաև "Кавказ", 1916г., 12 января, N 8:
[35] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, g. 1, q. 132, p. 30-33, նաև «Համբավաբեր», 1917թ., ապրիլի 23, նո. 15:
[36] Центральный Государственный Архив Литературы и Искусства РФ (այսուհետև՝ ЦГАЛИ РФ), ф. 199, Д. Н. Жванов, оп. 1, д. 117, л. 10, նաև «Արև», 1916թ., հուլիսի 20, թիվ 157, նաև «Հորիզոն» 1916թ., հուլիսի 15, թիվ 156, նաև «Վան-Տոսպ», 1916թ., հուլիսի 24 ,թիվ 35, նաև "Армяне и война",1916г., июль, N 5.
[37] «Հորիզոն», 1916թ., հոկտեմբերի 27, թիվ 240, նաև «Մշակ», 1916թ., հոկտեմբերի 28, թիվ 242, «Վան-Տոսպ», 1916թ.,հոկտեմբերի 30, թիվ 49, նաև «Աշխատանք», 1916թ., նոյեմբերի 2, թիվ 53:
[38] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, g. 1, q. 581, p. 7, նաև ЦГИА РГруз., ф. 2080, оп. 1, д. 178, л. 98:
[39] «Աշխատանք», 1917թ., հունիսի 3, թիվ 10:
[40] ЦГВИА, ф. 29, оп. 7, д. 329, лл. 19-24, նաև ЦГИАЛ, ф. 1276, оп. 19,д. 1148, л. 36, նաև Закон об обеспечении нужд беженцев, Москва, 1916, с. 1-16, նաև ՀՀ ՊՊԿ ֆ. 239, g. 1,q. 3, p. 30-31:
[41] ЦГВИА, ф. 29, оп. 7, д. 329, лл. 26-27, նաև ЦГИАЛ, ф. 1276, оп. 19, д. 1148, лл. 39-41, նաև ЦГИА РГруз., ф. 17, оп. 1, д. 8338, л. 1.
[42] ՀՀ Եղ. Չարենցի անվան Գրականության և Արվեստի թանգարանի արխիվ (այսուհետև՝ ԳԱԹ-ի արխիվ), ֆ. 14, q. 1949, նաև "Голос Кавказа", 1915г., 1 декабря, N 2606.
[43] Центральный Государственный Исторический Архив г. Москвы (այսուհետև՝ ЦГИА г. Москвы), ф. 179, оп. 3, д. 1204, л. 1-8, նաև Руководящее положение по устройству беженцев.
[44] ЦГИА РГруз., ф. 520, оп. 1, д. 201, л. 20-24.
[45] ЦГИА г. Москвы, ф. 65, оп. 39, д. 124, л. 2, նաև Центральный Государственный Исторический Архив Ленинграда (այսուհետև՝ ЦГИАЛ), ф. 1276, оп. 19, д. 1162, л. 53-54, նաև ЦГИА РГруз., ф. 520, оп. 1, д. 204, л. 31-39, նաև " Беженец", 1915г., 22 ноября, N 6.
[46] ЦГИА РГруз., ф. 2080, оп. 1, д. 178, л. 153, նաև д. 204, л. 31-33.
[47] ՀՀ ՊՊԿԱ, ֆ.70, g. 1, q. 437, p. 280:
[48] ЦГИАЛ, ф. 1276, оп. 19, д. 1162 ,л. 53-54.
[49] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 17, g. 1, q. 8595, p. 126-127:
[50] Центральный Государственный Архив РФ (ЦГА РФ), ф. ДП, 00,1916г., д. 14, л. 19-120, նաև АВПРИ, ф. Политархив, 1915-1916гг., оп. 482, д. 3492, л .5-6, նաև ЦГВИА РФ, ф. 29, оп. 7, д. 329, л. 27, նաև ЦГИА РГруз., ф. 17, оп.1, д. 8595, л. 179-182, նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 70, g. 1, q. 436, p. 78, նաև q. 439, p. 36, նաև ֆ. 57, g. 2, q. 1254, p. 1, նաև ԳԱԹ-ի արխիվ, ֆ. 181, q. 109, նաև "Молот", 1917г., 2 октября, N 23.
[51] ЦГИА РГруз., ф. 17, оп. 1, д. 8598, л. 9-10.
[52] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 50, g. 1, q. 127, p. 90, նաև ֆ. 55, g. 1, q. 134, p. 231:
[53] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 27, g. 1, q. 226, p. 33, նաև ֆ. 55, g. 1, q. 115, p. 2, նաև «Մշակ», 1915թ., նո. 51-52 ,նաև «Հորիզոն», 1915, մարտի 17, նո. 60:
[54] Նույն տեղում, ֆ. 332, g. 1, q. 1028, p. 2, նաև ֆ. 27, g. 1, q. 245, p. 40, նաև ЦГИА РГруз., ф. 520, оп. 1, д. 204, л. 6, նաև ф. 13, оп. 27, д. 3686, л. 9, նաև ЦГА РФ, ф. ДП 00, оп. 245 (1915г.), д. 168 (1), նաև «Փայլակ», 1915, մարտի 15, նո. 3, նաև «Արեգ», 1915թ., ապրիլի 4, նո. 11:
[55] ՀՀ ԿՓՊԿԱ, ֆ. 819, g. 1, q. 46, p. 1:
[56] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 50, g. 1, q. 140, p. 45, նաև ֆ. 27, g. 1, q. 286, p. 2-3, նաև Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, g. 20, թղթ. 238, q. 270, p. 1-4, նաև

ՍԳԻ ՌՖ, ֆ. ԴՊ, 00, 1916г., д. 14, л. 21, նաև «Համբավարեր», 1916թ., մայիսի 15, նո. 20, նաև մայիսի 29, նո. 22, նաև «Գաղափար», 1916թ., մայիսի 15, նո. 37, նաև մայիսի 27, նո. 41.,նաև հունիսի 8, նո. 46, նաև հունիսի 10, նո. 47, նաև «Հորիզոն», 1916թ., մայիսի 14,նո. 10, նաև մայիսի 17, նո. 108, նաև «Աշխատանք», 1916թ., հոկտեմբերի 8, նո. 46, նաև «Վան-Տոսպ», 1916թ., մայիսի 22, նո. 26:

[57] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թղթ. նո. 238, գ. 301, ա, գ. 1դ1, նաև գ. 261², թ. 112, նաև գ. 326ա, նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1080, թ. 1-2, նաև ֆ. 50, ց. 1,գ. 102, է. 1,8:


**Резюме**

Геноцид армян и армянские беженцы на Кавказе в 1914-1916гг.

Аветис Арутюнян

Вследствие массовой резни и депортации, предпринятых младотурецким правительством, а также проводимой царизмом колониальной политики в отношении Западной Армении в годы Первой мировой войны, как западные, так и персидские армяне, четырежды (в ноябре-декавре 1914г., июле 1915г., в июле-августе и ноябре 1916г.) переселялись и нашли привежище в разных районах России, в Закавказье, в результате чего районы Западной Армении были полностью лишены своего армянского населения. Наиболее трагичным было переселение населения Ван-Васнуракана в июле 1915г., явившееся, главным образом, следствием армянофобской политики царизма.



**Summary**

The Armenian Genocide and Armenian Communities in Caucasus 1914-1916.

Avetis Harutunian

During the First World War the Turkish government started to put into execution what seemed a systematic plan for the extermination of the Armenian race. Many Armenian refugees took their refuge in different parts of the world. According to new revealed archive documents the article is considering the helpless situation of the Armenian refugees.